ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-25/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ծալովի աթոռների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **14.07.2025թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Ցոլակ Հակոբյան

Անահիտ Հակոբյան

Էլեն Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հերմինե Ալոյան

1. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու և պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու մասին.

1.1 Արձանագրել, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-25/56» ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից **«Մուշ կոմպլեքս» ՍՊԸ-ին** «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ 2025 թվականի հուլիսի 4-ին, էլեկտրոնային եղանակով՝ Armeps համակարգի միջոցով, ինչպես նաև հանձնժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (2025 թվականի հուլիսի 11-ը ներառյալ) չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ **«Մուշ կոմպլեքս» ՍՊԸ-ին** զրկել պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնման ընթացակարգի գահատման նոր՝ փոփոխված արդյունքների մասին.

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետն և սույն գործընթացի հրավերի 1-ին մասի 8.20-րդ կետը, ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած **«Գարանտիա Շեն» ՍՊԸ –ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և այն հրապարակելուց հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետով՝ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել **«Մուշ կոմպլեքս» ՍՊԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Արման Երանոսյան ՝

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Անահիտ Հակոբյան

---------- Էլեն Ստեփանյան

---------- Հերմինե Ալոյան/քարտուղար/